



Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository



Մույն աշխատանքն արտոնագրված է «Մտեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

891.715

4-49

ՅԵ. ԿԵՐԵՅՍԿԱՅԱ

ՇԵՂԱՓՈՒԱԿԱՆ

ԱՆԻԿԸ



ՊԵՏՏՐՈՍ

1931

ՅԵՐԵՎԱՆ

Հայաստանի Կոմկուլտուրայի
Կենտրոնի գրադարան

891.715
4-49

4.

2011-05

1462 $\frac{1007}{32540}$

ՅԵ. ՎԵՐԵՑՈՎԱՅԱ

ՀԵՂԱՓՈՒՆԱԿԱՆ ԱՆԻԿԸ

Քարզմ. Արտ. Հովվյանի.

Շապիկը և նկարները Տ. ՇԻՆՄԱՐԵՎԻ

[Faint, illegible text from the reverse side of the page, likely bleed-through from the other side of the paper.]

Պետհրատ № 1501
Դրատեպ. № 6168 (ք)
Տիրաժ. 5000
Պետհր. պատ. № 138

ՀԵՂԵՓՈՒՆԿԱՆ ԸՆԻԿԸ

Այս դեպքը պատահել է թագավորի որով: Այն ժամա-
նակ լես տասներկու տարեկան ելի, բայց այնքան փոքր և
նրհար, վոր վոչ վոք ինձ իննը տարեկանից մեծ չեր կար-
ձուս:

Մենք ապրում ելինք լերկու փոքրիկ սենյակներում:
Հայրս գրաշար եր, իսկ մայրս՝ դերձակուհի:

Ինչպես այսօր, հիշում եմ այն լերեկոն: Յես փոքր
ինչ մրսել ելի և անկողնում պառկել:

Հայրիկս տանը չեր. մայրիկս սեղանի մոտ նստած
կար եր անում: Մեքենայի թրխթրխկոցի տակ լես ննջեցի:
Ու քնի մեջ լսեցի.

— Ներս մտավ հայրիկս ուրախ-զվարթ:

Մայրիկս զգուշացրեց նրան.

— Մս՛ս... Անիկը քնած է:

Հայրիկս մոտեցավ ինձ, նայեց, նստեց մայրիկիս
կողքին և ցած ձայնով ասավ.

— Ավելի լավ, վոր քնած է: Յես ճարեցի... Հիմա
ցուլց կտամ, բոլորովին նոր են. դեռ իսկի բանեցրած
չեն...:

Իսկ յես արթնացել ու լսում եմ, թե նրանք ինչի մասին են խոսում: Չլինի թե հայրիկս ինձ համար վորակներն ծա յե բերել:

— Հավ յեղավ, — ասավ հայրիկս, — վաղը կիրակի յե առավոտյան Պետրոսի մոտ կշարենք: Հազար հատ կտրպենք. իսկ հետո ընկերների միջոցով կցրենք գործարաններում: Յեվ ինչ լավ ե կազմված թռուցիկը:


Մայրիկս հառաչեց:

— Չգուշ յեղեք. չբռնվեք: Միրոս անհանգիստ ե: Գոնե ընտանիքդ խղճա:

Իսկ հայրիկս ծիծաղեց:

— Թո՛ղ, — ասում ե, — ախ ու վախդ, վախկոտ: Յեթե մենք բոլորս վախենանք, հեղափոխութուն չենք տեսնի: Այսպես ստրուկ ել կսատկենք: Հայրիկս մոտեցավ սենյակի մեջտեղում դրված սեղանին:

— Տես, — ասում ե, — ինչքան գեղեցիկ են: Մայրիկս մոտեցավ: Իսկ յես աչքերս բաց արած նայում եմ: Հայրիկս բաց արավ վալսար. սեղանի վրա թափվեցին նոր, փայլուն տառեր: Յես շատ ելի սիրում արձձե տառեր: Յերբ հայրիկիս համար տպարան նախաճաշ ելի տանում, կանգնում ելի նրա մոտ և ժամերով նայում, թե ինչպես ե աշխատում նա: Կանգնում ե հայրիկս մեծ արկղի առաջ, իսկ այդ արկղը բաժանված ե մանր աչքերի, վորոնց մեջ շատ-շատ արձձե քառանկյունի յերկար կտորներ կան: — Նրանք լի ա ե բ ա ն եր են կոչվում: Կարծես բոլորը միատեսակ լինեն. իսկ յերբ մոտիկից նայես, ամեն մեկի վրա տարբեր տառեր են: Յեվ շատ հետա-



քրքիր. ուռուցիկ և թարս: Մեկ աչքում բոլորը «ա» չէ, մյուսում՝ «բ», և այդպես ամբողջ այբուբենը:

Հայրիկս կանգնած նրանցից բառեր և կազմում աչնբան արագ, վոր շեռ կարող հետևել: Ահա այդ բոլոր տառերը միասին շրիֆտ են կոչվում:

Հայրիկս շրիֆտը թափեց սեղանի վրա: Տառերն աչնպես են խշխշում, փայլում, կարծես նոր խաղալիքներ լինեն: Յես իսկուհն հասկացա, թե բանն ինչումն է:

Հո գուր չեյի գրաշարի աղջիկ: Գործադուլների և ձերբակալությունների մասին շատ ելի լսել:

Ուզում ելի մոտիկից նաչել այդ նոր շրիֆտը, բայց բունս հաղթեց: Յեվ ել չեմ հիշում, թե ինչպես քնեցի: Հանկարծ քնիս մեջ լսում եմ, կարծես մեկը բարձս շարժում է: Բաց եմ անում աչքերս. մայրիկս գունատ, աչքերը լալն բացած, ինչ-վոր բան և դնում բարձիս տակ: Իսկ հարեան սենյակից լսվում են տղամարդկանց ձայներ և վոտքերի թխկոց:

— Մայրիկ, — շնչացի, — ովքեր են:

— Ուղարկութունն է... դու քնիր. մի դո.ցե քեզ, ձեռք չտան:

Մայրիկս դեռ սեղից շարձրացած, չերկուսը ներս մտան սենյակը:

Մայրիկս դառնալով նրանց, ասավ.

Խնդրեմ այստեղ կամաց: Յերեխան հիվանդ է:

Իսկ նրանցից մեկը խոստոս ձայնով պատասխանում է.

— Լավ: Միշտ ձեր չերեխաները հիվանդանում են: Ուր գնում ես խուզարկութունն կատարելու, միշտ ասում են «չերեխան հիվանդ է»:

Յես պառկած եմ վնչ կենդանի, վնչ մեռած. աչքերս
փակել եմ, կարծես քնած լինեմ: Լսում եմ ինչ վոր մեկը
հարեան սենյակից բարձր խոսում ե.

— Առաջ այտեղ խուզարկեցեր: Դրանց բոլորին
այդ սենյակից այս կողմը բերեք:

— Այտեղ քնած չեք երևա կա:

— Թող քնի. իսկ տանտիրուհուն այտեղ բերեք:

Տեսա, դուրս գնացին բոլորը և գուռը փակեցին:

Աչքերս բացի. ամբողջ մարմնով դողում եմ:

Սեղանի վրա վառվում է լամպը, անկողինները չեն
ճխրված: Յերևում է, վոր հայրիկս ու մայրիկս դեռ չեն
պառկել...

Իսկ դռան յետեվից լավում են ելի ձայներ, փոռե-
րի թխոց: Հանկարծ հիշեցի շրիֆտի մասին: Շունչս
կարգեց: Լավ գիտեմ, չեթե շրիֆտը գտնեն, վայ հայ-
րիկիս: Նայեցի մահճակալիս վրա և նայեցի շուրջս. վոր
վոր չկա: Հա, իսկ մայրիկս ինչ եր խոռոնում բարձիս
տակին: Ձեռքս տարա բարձիս տակ—և քար կարեցի...
Անտեղ... փախսում ամուր կապած եր ինչ-վոր փշփշոտ
բան...

Փստոելու են... անկողինս ել կնայեն. կգտնեն...
Պետք է պահել... Շուտ... բայց վնասեղ...

Ամբողջ մարմնով դողում եմ, ատամներս չխշխկում
են, նայում եմ շուրջս: Հարմար տեղ չկա: Լսել եմ, վոր
խուզարկության ժամանակ ամեն ինչ տակն ու վրա չեն
անում...

Վառարանի մեջ գցեմ—կգտնեն: Պահարանի գլուխը

դցեմ կլսեն, գուցե և վայր ընկնի... Ծանր է, աչքան
ուժ չունեմ: Կապոցը ձեռքիս, մահճակալիս վրա նստած,
չգիտեմ ինչ անեմ... բայց պետք է մի բան անել: Գի-
տեմ—պետք է: Բայց վնասեղ պահեմ... վորտեղ: Հան-
կարծ մի միտք չեկավ գլուխս: Թուա մահճակալից ցած,
փոռքերիս թաթերի վրա արագ մոտեցա սեղանին, նայե-
ցի կավե կճուճի մեջ: Տեսա՝ կաթ կա: Բաց արի կապո-
ցը. ձեռքերս դողում են, ուժ չկա: Կապոցն ամուր եր
կապած... Յեվ վախենում եմ, վոր կարող են հանկարծ
ներս մտնել: Կապոցը չի քանդվում: Ատամներով ամուր
քաշեցի, իսկույն քանդվեց: Փախսի մի ծայրը կոխեցի
կճուճի մեջ: Շրիֆտը թափվեց, խշխշաց: Տեղն ու տեղը
սառա... Վոչինչ, մտն են գալիս: չեք ել չլսեցին:

Կաթն սկսեց վեր բարձրանալ և թրջեց փախսը:
Փախսը փռեցի լուսամտուտի դողին ու սկսեցի տառերը
բուով կճուճը լցնել: Կաթը բարձրացավ մինչեվ կճուճի
չեզըը. իսկ շրիֆտից դեռ շատ կա: Ի՞նչպես անել: Թափել:
Ձեռքերս դողում են... Կոացա և սկսեցի կաթից խմել:
Կուլ եմ տալիս, խեղդվում եմ, կոկորդիս մեջ մնում է:
Քիչ եր մնում հազալի:

Հանկարծ փոռքերի ձայն լսեցի... աչքերս միթեցին...
Վոչ, ելի հեռացան:

Յերկու բուռն ել լցրի, կաթն ելի մինչև չեզըը
բարձրացավ: Նորից սկսեցի խմել...

Ո՛ր: Վերջապես բոլոր տառերը լցրի: Կաթը կճուճի
չեզըին հավասար եր: Յերկու կում ել խմեցի: Փախսը
ծալեցի ու զցեցի մայրիկիս փախսների կողովի մեջ: Իսքս

— ծըլի—տեղս մտա: Գլուխս դժժում եր, կարծես սենյակի հետ թռչում եմ— վատ եյի զգում: Չգիտեմ չերկար պառկեցի, թե չե. մեկ ել լսում եմ— դուռը բացվում ե, բոլորը ներս են մտնում:

Մայրիկս դողդոջուն ձայնով ասավ.

— Յերեխային ձեռք չտաք միայն. նա դժվար հիվանդ ե:

Իսկ նրանցից մեկը պատասխանում ե.

— Աղջիկդ մեզ պետք չե. մանձակալը պետք է խուզարկենք: Աղջկանը վերցրեք:

Չի կարելի նրան անհանգստացնել, — ասում ե մայրիկս:

Խեղճ մայրիկս հաղիվ եր խոսում. մեղքս չեկավ: Յեվ չեր ել կարելի ասել նրան, թե չրիֆտը բարձիս տակին չի:

Պրիստավը գոռաց.

— Վերցրեք աղջկանը:

Հայրիկս մոտեցավ, գրկեց ինձ և նստեց աթուռին:


Իսկ չես ել ձևացրի, իբր թե վռչինչ չեմ զգում:

Սիրտս քիչ եր մնում պաշթի: Հայրիկիս ձեռքերը դողում եյին:

Տեսնեմ— վար գցեցին բարձս և սկսեցին քրքրել անկողինս: Յերկար փնտռեցին:

— Լավ, — ասում են: — Կարող եք վալը դնել:

Հայրիկս ինձ զգուշ վար դրեց: Աննկատելի կերպով չես շուռ չեկա անպես, վոր չերեսս դեպի սենյակը լինի:



Շատ եջի հետարբարձում, թե ինչ ե կատարվում: Աչքերս
կիսախուփ՝ սկսեցի գիտել...

Վոնց վոր աչսոր, տեսնում եմ. հարևան տների լեր-
կու գոնապաններին, վորպես վկաներ և հասա փորով,
երկար բեխերով և կարմիր լերեսով պրիստավին: Ամե-
նից շատ, չգիտեմ ինչո՞ւ, հիշում եմ պրիստավի ձեռքերը՝
կարճ, հասա մատներով:

Սուզարկության ժամանակ նա անընդհատ քայլում
եր սենյակում և ամեն ինչի ձեռք եր տալիս:

Բացի նրանից՝ կար նաև մեկը. անպայման մատնիչ
կլիններ: Նրան մինչև այժմս ել չեմ կարողանում մոռա-
նալ. միշտ ժպտերես, գուրեկան ձայնով, կարծես բարե-
հաբույր. իսկ աչքերը, աղվեսի աչքերի նման արագաշարժ
ու ծակոզ ելին: Յեվ ինչպես նա չհկատեց, վոր լես կի-
սախուփ աչքերով հետևում ելի նրան:

Ամեն ինչ սակն ու վրա արին, ամեն տեղ փնտոե-
ցին:

Հայրիկս արձանի նման կանգնել եր, մայրիկս քաշ-
վել եր մի անկյուն և ձեռքերով լերեսը ծածկել:

Պրիստավը բարկուղած եր: Յերևում եր դժգոհ ե, վոր
բան չգտան:

— Դե, — ասում ե, — արձանագրություն պիտի գրեմ:

Սեղանը մաքրեցեք:

Միրսա գող ընկավ. ինչ վոր բան ե լինելու:

Մայրիկս վերկացավ և փախսով սրբեց սեղանը:

Պրիստավն սկսեց գրել:

Աչնուհետև ել չեմ հիշում. վոչ քսած ելի, վոչ ար-

թուն: Հանկարծ վեր թռա. աչքերս բացի, տեսնեմ—լուսանում ե: Մայրիկս լամպի լուսի տակ կար եր անում. իսկ հայրիկս կանգնած է սենյակի մեջտեղը: Ամեն ինչ հիշեցի, քիչ եր մնում ուրախությունից ճչամ: Հայրիկս ազատվել է: Տանն է: Մայրիկս խոսում եր բարկացկոտ ձայնով.

— Ինչ է, գժվել եմ, ինչպես չեմ հիշում: Ասում եմ իմ սեփական ձեռքով դրի Անիկի բարձի տակ: Վերջը փորձանքի մեջ ես ընկնելու ընկերներիդ հետ:

— Զարմանալի չե,— ձեռքերը վեր բարձրացնելով ասում է հայրիկս,— ուր կորավ, ջուրն ընկավ:

Զամբերեցի, ծիծաղելով աղաղակեցի:

— Զուրը չի ընկել. կաթի մեջ է ընկել:

Յերկուսով ցնցվեցին: Հայրիկս ինձ նայեց:

— Ինչ է, զառանցում ե:

Իսկ յես դեն գցեցի վերմակս, նայեցի մահճակալիս վրա և ուրախությունից չկարողացա իսկույն խոսել: Ու հետո հանկարծ հիշեցի.

— Լսիր հայրիկ,— ասում եմ, ու ինքս ծիծաղում:

— Վերջապես յես այսպիսի մի հեքիաթ եմ կարդացել,— ապրում եյին յերկու պառավ— մարդ ու կին: Նրանք կախարդական մի կճուճ ունեւին: Նրանք այդ կճուճի կաթը խմում ելին, խմում, բայց միշտ լիքն եր մընում... Այդպես էլ մեր կճուճն է:

Հայրիկս հասկացավ, նայեց չորս կողմը: Արագ մտեցավ պատահանին ու կճուճը ձեռն առավ...

— Անիկ,— ասում է,— այդ դ՞ու յես այստեղ լցրել:

Յես զլսով արի: Մայրիկս զարմացած ձեռքերն իրար խփեց, հետո ուրախությունից սկսեց լաց լինել:

— Զանիկս, խելոքս, դու մեզ վրկեցիր բանախց, խայտառակությունից...

Իսկ հայրիկս լուռ մտեցավ ինձ, զրկեց, բարձրացրեց, սեղմեց կրծքին ու սկսեց սենյակում ման ածել:

Ման է ածում հայրիկս և կրկնում է կամաց.

— Ինչ լավ աղջիկ ունեմ: Քեզանից իսկական հեղափոխական դուրս կդա:

Յես ինձ չկորցրի:

— Ինչպես թե,— ասում եմ,— «դուրս կդա», մի՞թե յես արդեն հեղափոխական չեմ:

Հայրիկս ծիծաղեց:

— Ճիշտ է,— ասում է,— ընդհանուր գործում քո մասնակցությունն էլ կա:

Համա ցավեց փորս առավոտյան, հա:


Ել չցավե՞ր. հիվանդ դրությամբ այդքան կաթ ելի խմել:

Հայրիկս կատակով ասավ.

— Գու ազատության համար ես տանջվում. հեղափոխության համար...

Իսկ յես քիչ եր մնում ցավից լաց լինեմ. բայց պատասխանում եմ.

— Ի հարկե,— ասում եմ,— հեղափոխության համար: Բայց մի բան է ինձ վշտացնում, վոր չի կարելի դպրոցում ընկերներին պատմել: Փաղտնիք է:



Е ВЕРЕЙСКАЯ

ТАНЯ РЕВОЛЮЦИОНЕРКА

Гиз. ССРА 1931 г. Эривань

«Ազգային գրադարան»



NL0386772

91-22 25 4071

